ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1496Ա «26» 08 2026 թ.

ՏԻԳՐԱՆ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշումը, արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ Ա. Պապոյանի զեկուցագիրը և ՀՀ արտաքին գործերի նախարարության 2026 թվականի օգոստոսի 24-ի № 1117/43502-26 գրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Տիգրան Վիրաբյանին 2026 թվականի սեպտեմբերի 3-4-ը ներառյալ գործուղել Վրաստան, ք. Թբիլիսի՝ «Հայաստանի մշակույթի օրեր Վրաստանում» միջոցառման անցկացման հնարավոր հարթակները ուսումնասիրելու նպատակով:

2. Գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Տիգրան Վիրաբյանի պարտականությունների կատարումը վերապահել նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Ալֆրեդ Քոչարյանին:

3. Տիգրան Վիրաբյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Տիգրան Վիրաբյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գործուղման արդյունքների մասին հաշվետվություն:

8/26/2026

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ